



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« \_\_\_\_\_ » 2019թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10

## ՈՒՂԵՐԶ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսուցիչներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ:

Որակյալ կրթությունն ուժեղ և կայուն պետություն կառուցելու հենասյունն է, որի անբաժանելի մասնիկն ուսուցիչն է:

Դպրոցական տարիներից խոսելիս յուրաքանչյուրիս մեջ արթնանում են սիրելի ուսուցչի, նրա վառ կերպարի մասին հիշողությունները: Այդ հիշողությունները ջերմացնում են մեր հոգիները և իրենց ուրույն հետքը թողնում մեր հետագա գործունեության վրա:

Հարգելի՛ ուսուցիչներ, երախտապարտ ենք ձեր հոգատարության, սրտացավ ու անձնագրի աշխատանքի համար:

Մաղթում եմ առողջություն և հաջողություններ՝ աշակերտ կրթելու ձեր պատվավոր առաքելության մեջ:



Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ